

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Չափարկոյ համար Տարեկան 12 ֆր. » » Վեցամսեայ 6 ֆր. Առաքատնականի համար (երկու քիւր մեկ հրատու) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր. Անտիպոյի 2.60 տղ. վեցամս 1.50 ԿԱՆԻՍԻՆ ՎՃԱՐՆԵԼԻ	Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա) Редакция на ВѢСТНИКЪ „Иравункъ“ ВАРНА (България)	Rédaction du journal „Iravounk“ V A R N A (Bulgarie)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն որկուր եւ յարմար դասուածները միայն կը հրատարակուին աւանդովին կամ մասամբ: Իսկուցման տղը 20 սանթիմ. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը շինի:
--	--	---	--

ԱՅՏԻ ՈՒ ԽՆԴՈՒՄԻ ՄԷՋ

Գողթփորական անունին բոլոր վսեմութենէն զաւելորէն աղաւազած, կեանքին մէջ միշտ դէպի առ բարձրութիւնը մաղլցել կեղծեղ և գահավիժօրէն ազին բացը թողլով, աշխարհի արձակ ու յաւն գաւոր քահանայներու տարափին դատապարտող սուտիկէ գաղափորականի մը կաւտարին համակերպութիւնը չունեցան բարեբաղ դարար տեղական երկու թերթեր — Իրաւունք ու Հայրիկ — ու վերջապէս ուշ կանուխ հաճեցան հասարակութեան դատաստանին ներկայացնել պատմութիւնը այդ սիրտ խառնող անցուղարձին, որ տեղի ունեցեր է տեղիս թաղականութեան և Որբախնամին միջև ուսիկ փութիկ ու պաշտօնական անորակելի ձիգ սուրբաբանութեամբ:

Որբախնամը, որ հայրենի երկրին մէջ տառապող անհայր ու անմայր անթիւ ու ծարաւ հէգ մանկութեան անհրաժեշտ խնամքներ հասցնելու առաքինական գերազանց պարտքը կ'ստանձնէ և ասով արտասահմանի քարտուղութեան մէջ էն յուզիչ ու մխթարական պատկերը կը գծէ, քաջաբերանքի ամենէն զօրաւոր շեշտը լսելու միամիտ պատրանքով մը կերթայ ամ կանէ թաղի. խորհուրդին գուռը և կառավարական տիրող օրինաց պահանջներուն համեմատ իր կանոնադրին վաւերացումը կը խնդրէ, որ ինք կարող ըլլայ ազատ համարձակ դրամ հաւաքել, թաւերական ներկայութեան սարքել և ի հարկին վիճակահանութեան դիմել ինչպէս բոլոր, միշտ Հայաստանի պղծիկ մարտիրոսներուն համար:

Թաղականութիւնը՝ Որբախնամին միջնաւ ան օրը հաւաքած և անկէ վերջը հաւաքելիք ստակներէն նոյն անպաշտօն կերպով հարկերին 25 վաւերացին պահանջելէ յետոյ, կը հաճի վերջապէս հարկերին 10ի իջնել, պայմանաւ որ աս երկրորդ սակին շնորհուրդը կապէ Որբախնամին պնակ պըտըցնելու, թատերական ներկա-

յացութեան տուր և վիճակահանութիւնները ընելու իրաւունքը:

Ու Որբախնամը՝ քիչ մը տալ անհելէ և ատ բանակութիւն մէջ բանտի սպառնալեաց խուլ ու ամօթալից կաղկանձն ալ լսելէ յետոյ, կերթայ կը գիմէ կառավարութեան և իր գերազանցապէս բարեփորական գործին վաւերացումը կ'ստանայ, առանց վաշխառուական ու է պայմանագրութեան, Ահա բոլոր պատմութիւնը:

Հիմակ, աշքերնուգ առջեւ բերէ՛ք խեղճ պլոտկները՝ իրենց մուրալու սրտայոյզ կացութեան մէջ, արեան ճապարկներու պլշկում, Հայաստանի մէկ ծայրէն միւսը ցիրուցան, ցնցոտիններով հազիւ ուրիմն պարտկուած, պնակը ձեռքերին ու արտասուալից և տառնց հանդէպ դրէ՛ք ազատ երկրի մէջ, շատ աւելի նը պատասուր պայմաններու տակ ապրող և հետեւաբար իր ազգային պէտքերը աշխարհու հոգալու կարող ազգային պաշտօնէութիւն մը որ ձեռքը կերկնցնէ ատ պնակին մէջ անխնայօրէն և հոն ոչ միայն բան մը չը գնէր, այլ բան մըն ալ առնել կուզէ անպիտիկ ու անկարկամ:

Եւ ատ յաւիտենապէս ամօթալից պատկերին քովիկը դրէ՛ք նաև Որբախնամ մը, որ իր թիւերը տարածած իր ծնած գործին վերայ, օրինակելի գնդեցիկ թափով մը ետ կը մղէ պնակին մէջ երկրի ցնած ձեռքերը և հայրական աւելի հոգածու գրկի մը կը յանձնէ անոր պաշտպանութիւնը: Ու ատ հայրական գրկը կը բացուի որբերուն առջեւ անպայման կերպով:

Սուկալի է մտածել թէ կը գըտնուի եղբր աշխարհի մէջ ազգապաշտօնէութիւն մը, որ մէկ քանի տասնեակ որբերու հացէն օն տալիս պահանջելու չափ իջնայ և անդին՝ գիտակցօրէն կամ ոչ, առանց վաշխի թոյլատրէ սարքումը անանկ երեկոյթներու, որոնք զուտ անհատական ըլլալով հանգերձ, չը գիտենք ատ պաշտօնէութեան որ մէկ անգամին համակերպութեանը արժանացած է տիրապէս:

Աս ամենուն կը միանայ այլապէս աւելի խոշոր արատ մը, որ ամօթոյ էն խոշոր ցեցը պիտի ըլլայ ատոր ճակատին վրայ ամեն շրջանակներու մէջ ալ. այն է թողուլ, որ իր տանը գործը ուրիշներ զան կարգադրեն և այսպէսով զոհել ազգ. արժանապատուութիւնը, առանց ամենափոքրիկ խղճի խայթի:

Խնդումին՝ զոր ունինք մեր գէմքին վրայ Որբախնամին վերջնական յաջողութեանը համար, եւ լացին մէջ, զոր կուտնք ապիկար թաղականութեան մը երեսէն, ինք կարող գտնել բաւ մը, որ ճշդէ մեր այսօրուան հոգեկան վիճակը: Մէկին ԱՊՐԻՍ, իսկ միւսին ԱՄՕԹ:

Դէս ուղիւն

ՕՏԱՐԱՄՈԼՈՒԹԻՒՆԸ

—) 0 (—

Ո.

Շատ մը սպանիչ մոլութիւններէ ու վարակիչ միջորոշներէ աւելի թունաւոր և շուտ սպառող է մեզ նման, զաղթականութիւնը կ'իմանքի պայմաններէն մին եղբր ժողովրդի մը համար ա'տ անիծած ախտը, օտարամոլութիւնը:

Թեւեւ «Իրաւունք»ի համեստ ծաւալը չը ներեր որ ատ ամենափառագաւոր ախտի ու իր վատ արդիւնքի պատմութիւնը իւր ընդարձակ գիծերով ներկայացնէ, մինակ, իբրեւ համառօտ ուրուագիծ մը, պիտի փորձեմ կարելի եղածին չափ որոշ գաղափար մը տալ ատ փճացնող ախտին վրայ, առանց չափազանցութեան արձանագրելով ան տխուր ու ազգափնաս հետեւութիւնները զոր ատ ախտը ունեցած է, Հայաստանէն դուրս ապրող մեր այնքան բազմաթիւ գաղթականութեան մասին:

Միայն թէ, աս գրածներս վայրկեանական տպաւորութեան մը տարբեր չը կարծուելու համար, անցողակի պիտի յիշեցունեմ հայկական ան ստուար և բազմամարդ գաղթականութիւններու վիճակը, որոնք Հայաստանի նախկին տագնապալից օրերուն ստիպուած էին հեռանալ իրենց բնագաւառէն, ու

խմբովին դիմել օտար երկրներ, որպէս զի ան տեղերու քրիստոնեայ կառավարութիւններու իշխանութեանց ներքեւ կեանքի ու ընչքի ապահովութեամբ ապրին:

Այս գէպերու օրինակները չա'տ ու չա'տ կան, մեզմէ շատերը գիտեն լէհաստանի Մոլտավիոյ ու դեռ ուրիշ չեմ գիտեր որ տեղերու, հարկը հազարաւոր հայ գաղթականներու կսկծեցուցիչ պատմութիւնները: Որոնք անգիտակցօրէն, ու նիկօլներու նման անարժան հովիւներու շահագրիտութեան և կոյր ագիտութեան երեսէն, անխտրաբար օտարաւորացեալ կորստաբեր հոսանքին ենթակուելով, անզգայապէս ու անքան շուտ օտար տարրի հետ ձուլուցան, Ու այսօր, ա'տ երբեմնի ճոխ հայ գաղթականութեանց զարգացած ներկայ սերունդը, իրենց ազգային բոլոր առանձնատկութիւններէն զրկուած, իրենց ամբողջութիւնով օտար մըն են մեզ ամենուս համար:

Ազգային տեսակէտով, մեր գաղթային կեանքի մէջ, օտարամոլութեան աս հիւանդութիւնը ա'յնքան փնասակար եղած է մեզի համար, որքան Հայաստան գաղտնաբար յոյ Մոնկոնիերու արիւնոտ արշաւանքը, Արապներու սարսափելի տիրապետութիւնը, Շահապասի աշխարհաւեր մերկացումն ու թիւրք արիւնկզակ Սուլթաններու շարունակական ջարդն ու կոտորածը:

Ազգային կոյր փանաթիկութիւնը չէ որ կը թելադրէ զիս այսքան ծանրանալ այս կարուոր հարցին վրայ, այլ՝ ան ամենատխուր իրականութիւն, ան ազգակուլ ախտն է, որ լափիզող գաղտնի պէս իր հրեշաւոր բերանը ազահօրէն բացած մեր արտասահմանի բազմաթիւ գաղութները կու տալու կապառնայ: Այս իրողութեան հետ մէկտեղ, զիտէ՛ք, ցառալին ա'ն է որ, մեր էնտէլիգենտ (") համարուած սերունդը, կամ բարեկեցիկ ու հարուստ դատակարգը ամենէն շատ, ա'տ գէշ ախտին կու մովին ենթակայ է: Ստոնք, ատ ողորմելիները, ինչ որ ազգային է և վեհ, իբրեւ արհամարհելի բրա-

ծոյ մերժելով, միմտային ծաղրե-
լի մտածումներով, օտարամտու-
թեան այնքան սիրահարած են որ,
ազգային ու պապենական ամէն ա-
ւանդութիւն ու սրբութիւն, ի-
րենց վարագործութեամբ աչքերուն ան
հեթեմութիւն ու կոշտ կը թռնին:

Ասկէ 60-70 տարիներ առաջ,
Ռուսմանիոյ ու Մոլտավիոյ կող-
մերը այցելող մը, կարծեմ, հի-
մակուան դրութեան հակառակ,
նոյն երկիրներու հայ գաղթական-
ները ինքեանքը չէ թէ միմտակ ազգա-
յին էական սովորութիւններէ ու
ծագած չ'էր գտներ, այլ ընդհա-
կառակը բաւական զգայուն ու հայ
ընկերքի սիրով տոշորուող՝ իրենց
ազգային ինքնութիւնը պահող հա-
յեր պիտի տեսնէր: Չ'ուրեք, Ռ-
րոնք զերծ էին քրիստոնէ տարրի հետ
ձուլուելու վտանգէն:

Դժբախտաբար, երբ ազգային
ինքնաճանաչութեան զգացումը
հետզհետէ ան քաղթավայրերու
հայոց մէջը կը թռնայ, ու կրա-
կըսին օտարամտութեան ազգակու-
հասանքին հետեւիլ, ա'տ երկիրնե-
րու ահագին գաղթականութիւնը
բոլորովին իր ազգային ինքնու-
թիւնը կը կորսնցնէ, ու ոչխարա-
մտորէն օտարի հետ ձուլուելու վի-
ճակին կը հասնի:

Ինչպէս ըսի, այսօր, ա'տ խոր-
թացած հայութեան սերունդը, իր
հայրերու աւանդութիւններն ու
սովորութիւնները մոռնալէ զատ,
նոյն իսկ ամօթ կը համարին խոս-
տովանիլ որ իրենք ա'լ մեղի նման
հայ արիւնէ ու հայ նախնիքներէ
սերած են:

Հապ'ա, ինչ պիտի բռնէր Ռու-
սմանիոյ մէկ քանի քաղաքներու
մէջ դեռ եւս հայ անուան ներքեւ
ապրող ան մեր պատուական ազ-
գայնիցներուն, որոց ընտանեկան ու
յարաբերական կեանք, վարք ու
բարքը, և ոչ մէկ տեսակէտով ա-
տոնց հայ ըլլալու նշանը կը ցուց-
նեն ու երեւոյթապէս, կամ որ
ճիշտ է, գաղտնապէս՝ սրով հետեւ
կը խափին եղեր ատոնք շատ տե-
ղեր յայտնի հայ եւ ըսելու, —
հայ անուն կրող ատ' արգահատե-
լիները, ողջ ողջ գերիզման դիմո-
ղի մը պէս, օտարութեան մէջ
տակաւ կը լուծուին ու կը չքա-
նան: Ազգայնապէս ատ հոգեվարք
ազգայնք, ո'չ մայրենի լեզուի,
ո'չ ազգային եկեղեցիի ու հայրե-
նիքի անցեալ ու ներչայ պատմու-
թեան մասին գաղափար ունին: Ու
քանի որ տոհմային հարազատ դաս
տնտեսականութիւն ու ազգային վառ
զգացում ա'լ կը պակսի իրենց,
անհատական կեանքի կամ հացի
խնդրոյ ստորնացուցիչ կռուի մէջ,
չուտով կընկրկին ու կը խորթո-
նան իրենց բուն ազգութիւնէն:

Ազգային գոյութեան աղէտա-
բեր ատ տարափոխիկ հիւժմաւոր,
դրեթէ, որ որ հայ գաղթական
ները ինքեանքը մշտական կերպով
հաստատուած ու տուն տեղ կազ-
մած են հացի խնդիրը այնքան

բիրտ կերպով շնչառելուն պէս,
իր անմեռ միջբնակները տարա-
ծած է: Ատլանտեանի անդիի ե-
զերքէն, մինչև Սիպերիոյ սառուց
եալ գօտին, ան ամէն քրիստոն-
եայ կառավարութեանց երկիրնե-
րու մէջ, ուր, տանջուած հայը
քիչ մը մարդավարի կեանք վարե-
լու համար, սղատ շունչ կարծած
է քոշի, անմիջապէս իր առջեւ
ցցուած է իր ազգայնութեան ա-
մենաոխրիմ թշնամին, — օտարա-
մտութիւնը:

Ղ. Պ. Նախապետ

ԳՈՒԹԱՆ

Շնորհակալութեամբ ստացանք
առաջին թիւը «Գուլթան» հան-
գէսին որ կը հրատարակուի Տիար
Գարեգին Մեծատուրեանի խմբագ-
րութեամբ և Ֆրանսացի գիտնա-
կան Պր. Տի. Բլոյի հովանաւորու-
թեան տակ:

«Գուլթան»-ի այս առաջին թիւը
կը պարունակէ գիւղատնտեսական
շահեկան յօդուածներ: Խմբագր-
ը կը խոստանայ արհեստագիտա-
կան յօդուածներով ա'լ հայ ար-
հեստարարներու և օգտակար ըն-
ծայել իր նոր հանգէսը որ առ-
այժմ ամիսը անգամ մը կը հրա-
տարակուի 16 էջերէ բաղկացեալ:

Տիար Գ. Մեծատուրեանի ա'ց-
եալը ինչ որ ա'լ եղած ըլլայ, իր
այս նոր ձեռնարկութեամբ կուզայ
կարեւոր պակաս մը լեցնել: «Գու-
լթան»-ի առաջին թիւի պարունա-
կութիւնը մեզ կը համոզէ
թէ՝ դա կոչուած է նախապատմա-
կան ձեւերով երկիրը մշակող մեր
հոգագործ դասակարգին աշխա-
տութեան եղանակը բարեշրջել եւ
հայ երկրագործութիւնը արդիւնա-
լի ընծայել: Տ. Մեծատուրեան
Բարիկի Երկրագործական վարժա-
րանէն շրջանաւարտ ըլլալէ զատ
Ռուսմանիոյ մէջ և ուրիշ տեղեր
գործնականապէս ա'լ հոգագործու-
թեան հետեւած լինելով, ըստ ա-
մենայնի իր ձեռնարկին տէրը կը
ներկայանայ: Փափաքելի էր մեզ
որ սկիզբէն իր այս կոչումին հե-
տեւ, փոխանակ տարբեր ասպա-
րէզներու մէջ նետուիլ փորձելով
իր անունը բժաւորելու:

«Գուլթան»-ի օգտակարութիւնը
անհամեմատելի պիտ' ըլլայ, եթէ
թուրքիոյ, Կովկասիոյ և Պարսկաս-
տանի մէջ պէտք եղածին շափ ծա-
ւալ գտնէ: Երկրորդ հայը իր
այդ բնագաւառներէն դուրս ոչ
մէկ գաղթավայրի միջ երկրագոր-
ծութեամբ չի պարապիր գրեթէ:
Ուստի Տ. Մեծատուրեան պէտք
է ջանայ որ իր գրածները այժմ
Հայաստանի մէջ ապրող հայ գիւ-
ղացի դասակարգին հասկանալի
ըլլան, ուրկէ կրնայ ընդունիլ իր
յաջողութեան պակաս ու բարոյա-
կան փառաց դափնին:

«Գուլթան»-ի հասցէն է
Գ. Մեծատուրեան
23 Պիտ Կոնստ Գոյեթիայ
Բարիկ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՉ, 2 Փետր.

Մենք առիթը ունեցիր էինք
արդէն խօսելու մեր բարեգործակ
գեղարուեստագէտ հայրենակիցնե-
րէն նկարիչ Փ. Թէրլէմէզեանի
վրայ, երբ նա անցեալ տարի Բա-
րիկի «Արատեմի իւլիոն» կոչուած
գեղարուեստի բարձրագոյն վար-
ժարանին մէջ համընթացի մը ժա-
մանակ, իր Ֆրանսացի և օտար
բոլոր ընկերներուն մէջ առաջին
հանգիստացաւ և արժանացաւ առա-
ջին մրցանակին: Այս տարի նոր
պակ մ'ալ տարաւ մեր յարգելի
արուեստագէտը. հազիւ մէկ ամիս
առաջ նա Սկադիմիայի մէջ տե-
ղի ունեցաւ նկարչութեան ամե-
նագիտար նկատուած մէկ համըն-
թացութիւնը, որմէ նոյն իսկ ա-
մենայաջող աշակերտները սարսա-
փելով խոյս կուտան և որ կան-
ուանուի «Իրանի համընթացու-
թիւն»:

Պէտք է կենդանի մերկ
օրինակին (այդ թէ կին) զուլէն
մինչեւ փորի մտորին մասը (միջ-
շեւ սրունքները) նկարել և ինչպէս
որ է, այսինքն օրինակին ջիւղերը,
երակները, կուրծքի կամ կոնակի
զտնազան խորա ու բորտերը, այլ
և այլ գծերը, առաւել կամ նուազ
նշմարելի լոյսերը ևն: Ըսինք թէ
այս համընթացութիւնը վերին աս-
տիճանի դժուար է, սրուն կը մաս
նակցին միայն ամենայայտնի ա-
շակերտները:

Այս տարուան համընթացու-
թեան նիւթն էր, մերկ կին մը և
մերկ մարդ մը,
կը մասնակցէին այնպիսի նկարիչ
ներ որոնք մի քանի անգամներ
Սալոն ընդունուած և մետալներ
ստացած էին, ուրիշներ Յուլիան
դէսին մէջ արծաթէ մետալներ ըս-
տացած: ա'լ չենք հաշուեր պղնձէ
մետալներ ստացողները և գովասա-
նաց արժանացողները:

Արդ մեր հայրենակիցը Պ. Փ.
Թէրլէմէզեան այդպիսի ահռելի
մրցակիցներու հետ է որ համըն-
թացութեան մտած է և մենք ու
բախ ենք լսելու որ այդ յայտնի
նկարիչներէն շատ շատերը հայ
նկարչին ետին մնացած են, մեր
հայրենակիցը արժանացաւ Առա-
ջին Գովասանքին, բան մը որ հա-
ւասար է մետալի մը, մինչ մետա-
լաւոր (ոսկեայ), պղնձեայ) նկարիչ
ներ զորքը գատաւորներու ուշա-
դրութիւնն իսկ չէ գրաւած, մեր
հայրենակցին «մարդու» իրանը ա-
մենուն հիացման արժանացիր է:
Եւ ինչուի ուրիշ կերպ ա'լ չէր
կրնար լինիլ, վասնզի Պ. Թէրլէ-
մէզեանի նկարին մէջ այնպիսի
կեանք մը, այնպիսի շարժում մը
և գոյներու այնպիսի գիղեցկու-
թիւն մը և լուծում մը կայ որ
անկարելի էր անաչառ դատաւոր
ներու աչքէն վրիպել:

Հայ նկարչին յաջողութիւն. գե-
ղարուեստէ բիշ շատ հասկցողնե-

րուն համար, կատարեալ յաղթա-
նակ մ'է և մենք ուրախ ենք որ
կատարեալ «արդիւն» մ'ալ կուզայ
հայ նկարչներու փոքրագոյն
խումբը խոշորցնելու:

Սարգսիւնի մարդասիրտ մը
Գերմանացի Տօքթ. Անկէլ՝ նախ
կին տնօրէն Բրուսական մարդաս-
մարի Սենեկին, 1850էն ի վեր պա-
տահած պատերազմներու մէջ
կորսուած մարդոց և գումարանքու-
վրայ հետեւեալը կը հրատարա-
կէ:

Խորի մի պատեր. (1854) 750
հազար հոգի մեռած 9,837,500,000
ֆրանք ծախսուած:

Խաղաղկոյ պատերազմին (1859)
45,000 հոգի մեռած և 1500000000
ֆրանք ծախսուած:

Պատերազմ Տանիմարցուի (1864)
3000 մարդ մեռած 175,000,000
ֆրանք ծախսուած:

Հիւս. Ամերիկա (1861-65) 230000
հոգի մեռած և 21,700,000,000
ֆր. ծախսուած:

Հարաւ. Ամերիկա (61-65) 520000
հոգի մեռած և 11,500,000,000
ֆր. ծախսուած:

Աւստրո Բրուս. (1836) 45,000
մարդ մեռած և 1,380,000,000
ֆր. ծախսուած:

Մեքսիկայի և Գույնէիլի պղ-
տերազմին 65,000 հոգի մեռած
և 1,000,000,000 ֆր. ծախսուած:

Ֆրանսո Գերման պատերազմին
Ֆրանս. 155,000 հոգի մեռած և
15,000,000,000 ֆր. ծախսուած:

Գերման. 60000 հոգի մեռած և
ծախսը չէ գրուած:

Սերպ Պոլկար պատերազմու-
թիւն 25000 հոգի մեռած և
875,000,000 ֆր. ծախսուած:

Ռուս Թուրք պատերազմին
(1877) 250,000 հոգի մեռած և
5,625,000,000 ֆր. ծախսուած:

Հարաւ Ամերիկէի պատերազմին
30000 հոգի և 41,750,000 ֆր.

Աֆղանիստանի պատերազմին
25000 հոգի 66,250,000 ֆր.

Թիւրքիա (94-97) 300,000 կո-
տորուած Ամրող գումար 2500000
և 66,760,000,000 ֆրանք ծախ-
սուած:

Ս. Դ.

ԲԱՌԳԻՐԻ ԾՐԱՆՍՍԷՆՑ

Ամրող գործը երկու շաբաթ հա-
տորեկէ պիտի բաղկանայ, որոնց
յուսմինը որդէն ստացած ենք:
Այս հատորը 1060 միծաղիր երեք
սիւնակնոց էջերէ բաղկացած է.
գինն է 25 ֆր. ոսկի. երկրորդն
ա'լ ի մօտոյ պիտի հրատարակուի
նոյն գինով:

Կարծէ որ ամեն գրասէր ազգա-
յին ունենայ. ստանալ փափաքող
թող դիմեն միծանուն մատենա-
գրին: Իշ. Դ. Խոսիկեան
108 ալ. Տր. Նիքոլի, ու Նիքոլի
սխոյ/Ս. Լե (Մոսկու)
կամ «Հայերի» խմբագրութեան
վառնա

